

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԿԱՐԶԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-095-08.04.2019-ՊԻ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

| N  | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)   | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը    | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|----|---|--|---|---|--|
| 1. | ՀՀ կառավարություն                             | Հոդված 1.  | <p>Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 258<sup>2</sup> հոդվածով՝</p> <p>Հոդված 258<sup>2</sup>. Կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը</p> <p>1.Տնային և անտուն, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների կամ գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, այն է կենդանու կյանքի ընդհատումը խեղդելու,</p> | <p>Ընդունվել է:</p> <p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն</p> | <p>Առաջարկը ընդունվել է:</p>   |

|  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|
|  |  |  | <p>կախելու մասնատման, ուժեղ հարվածի, մտրակելու, հրազենով կրակելու միջոցով, կենդանու կյանքի ընդհատումը թունավորման կամ այնպիսի նյութի ներարկման միջոցով, որը հանգեցնում է դաժան և ցավոտ մահվան, ողջ վիճակում կենդանու մաշկումը, անդամահատումը կամ դիազերծում, ողջ վիճակում կենդանու կրակի վրա նետելը, բարձրությունից կամ փոխադրամիջոցներից նետելը, կենդանիների մարտերի կազմակերպումը և իրականացումը, անտուն կենդանիների այնպիսի հավաքը կամ բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը, ինչպես նաև կենդանիների նկատմամբ սահմանված կարգի խախտմամբ գիտաուսումնական փորձարկումների իրականացումը և այլ դաժան վերաբերմունքը`</p> <p>պատժվում է տուգանքով` նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից</p> |  |  |
|--|--|--|--|--|--|

|  |  |  |   |  |  |
|--|--|--|---|--|--|
|  |  |  | <p>Երեքհարյուրապատկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:</p> <p>2.Նույն արարքը, որը կատարվել է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,</li> <li>2) առանձին դաժանությամբ,</li> <li>3) մանկահասակի ներկայությամբ,</li> <li>4) երկու կամ ավելի կենդանիների նկատմամբ՝</li> </ol> <p>պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:</p> <p>Սույն հոդվածով՝</p> <p>Տնային կենդանիներ են՝</p> <p>ա) կենդանական աշխարհի վայրի և ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք պահվում են տնային պայմաններում, որոնց</p> |  |  |
|--|--|--|---|--|--|

|  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|
|  |  |  | <p>տեղաշարժը սահմանափակված է որոշակի տարածքով և որոնց կենսաապահովումն իրականացնում է տիրապետող, տնօրինող և (կամ) օգտագործող ֆիզիկական կամ իրավաբանական անձը,</p> <p>բ) «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով նախատեսված տնային կենդանիները:</p> <p>Անտուն կենդանիներ են կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք չունեն տիրապետող, տնօրինող, և (կամ) օգտագործող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:</p> <p>Ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիներ են կենդանական աշխարհի վայրի և ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք պահվում են կենդանաբանական այգիներում, օգտագործվում են կրկեսներում, սպորտային</p> |  |  |
|--|--|--|--|--|--|

|    |                                   |           |   |                            |                                |
|----|-----------------------------------|-----------|---|----------------------------|--------------------------------|
|    |                                   |           | <p>և ժամանցային միջոցառումներում, մրցույթներում, ցուցահանդեսներում, լուսանկարվելու և նկարահանումների համար:</p> <p>Ծառայողական նշանակության կենդանիներն են կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք օգտագործվում են նպատակային նշանակության գործողությունների և ծառայողական նպատակների համար:</p> <p>Գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիներն են կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք օգտագործվում են ուսումնական և գիտահետազոտական փորձարկումներ իրականացնելու նպատակով:»:</p> |                            |                                |
| 2. | <b>Պատգամավոր Նաիրա Զոհրաբյան</b> | Հոդված 1. | «Հայաստան Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 258.2 հոդվածով՝   | Առաջարկը ընդունվել մասնակի | Առաջարկը ընդունվել է մասնակի : |

|  |  |  |   |  |  |
|--|--|--|---|--|--|
|  |  |  | <p>Հոդված 258.2 Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը</p> <p>1. Կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը, որը հանգեցրել է դրա ոչնչացմանը կամ խեղմանը, ինպես նաև կենդանուն տանջանքների ենթարկելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:</p> <p>2. Նույն արարքը որը կատարվել է.</p> <p>ա) մի խումբ անձանց կողմից կամ կազմակերպված խմբի կողմից,</p> <p>բ) ակնհայտ անչափահասի ներկայությամբ,</p> <p>գ) հանրային ցուցադրամամբ, (այդ թվում համացանցի միջոցով)</p> <p>ժ) երկու կամ ավելի կենդանիների նկատմամբ,</p> <p>պատժվում են տուգանքով՝ սահմանված</p> |  |  |
|--|--|--|---|--|--|

|    |   |                  |  |                            |   |
|----|---|------------------|--|----------------------------|---|
|    |   |                  | <p>նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատագրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:»:</p>  |                            |   |
| 3. | <p><b>«Լուսավոր Հայաստան» խմբակցություն</b></p> | <p>Հոդված 1.</p> | <p>Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում որպես լրացում առաջարկվող 258<sup>2</sup>-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով:<br/> «2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) երկու կամ ավելի կենդանիների նկատմամբ,</li> <li>2) շահադիտական դրդումներով,</li> <li>3) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,</li> <li>4) ակնհայտ հղի կենդանու նկատմամբ,</li> <li>5) առանձին դաժանությամբ,</li> <li>6) արտահայտվել է մարմնի կամ դեմքի անջնջելի այլանդակմամբ,</li> <li>7) զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ,</li> </ol> | <p>Ընդունվել մասնակի :</p> | <p>է Առաջարկը ընդունվել է մասնակի :</p> |

|    |   |           |   |                         |                              |
|----|---|-----------|---|-------------------------|------------------------------|
|    |   |           | <p>8) անչափահասի ներկայությամբ,<br/> 9) հանրային ցուցադրմամբ<br/> պատժվում է տուգանքով՝ սահմանված<br/> նվազագույն աշխատավարձի<br/> երեքհարյուրապատիկից մինչև<br/> ինըհարյուրապատիկի չափով, կամ<br/> կալանքով՝ երեքից վեց ամիս ժամկետով,<br/> կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի</p>               |                         |                              |
| 4. | <p><b>«Լուսավոր<br/> Հայաստան»<br/> խմբակցություն</b></p> | Հոդված 1. | <p>Հայաստանի Հանրապետության քրեական<br/> օրենսգրքում որպես լրացում առաջարկվող<br/> 258<sup>2</sup>-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով:<br/> 3. Սույն հոդվածի համաձայն<br/> դատապարտված անձը պարտավոր է<br/> վճարել տուժող կենդանու կամ կենդանիների<br/> բուժման և վերականգնման բոլոր<br/> ծախսերը:»:</p> | Առաջարկը<br>ընդունվել : | չի<br>Առաջարկը<br>ընդունվել: |